their sample our people didn't fall behind their ancestors, during the Artsakh struggle. They protected their matherland according to the traditions of the older generation.

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 371.31:325 *Պատմություն*

«16-19-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա.Բ.Առստամյան

Ազգային դպրոցը դա կրթական օջախ է, որի խնդիրը ոչ միայն կրթելու, ուսուցանելու և դասավանդելու գործառույթներն են, այլև ազգային արժեքների պահպանումն ու փոխանցումը սերունդներին, ազգային գաղափարախոսության մշակումը: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը[1]: Հայոց պատմությունը ուսումնական այն առարկաներից է, որի ընթացքում ոչ միայն ուսումնասիրվում է հայրենիքի պատմությունը, այլև ուսուցչի հմտությունների շնորհիվ սովորողների մոտ ձևավորվում է ազգային մտածողություն: Հայոց պատմություն դասավանդող ուսուցիչը պետք է հստակ գիտակցի պատմության դասին ներկայացվող պահանջները՝ հայեցի դաստիրակություն, ազգային և համամարդկային արժեքների հաղորդում, պետական մտածողություն, պետականամետ կողմնորոշում:

Ազգային-ազատագրական պայքարը բովանդակող թեմաները կարևոր տեղ են գրավում հայոց պատմության դասավանդման գործընթացում: Այս թեմաների մատուցման ժամանակ ուսուցչից պահանջվում են յուրօրինակ մանկավարժական հմտություններ, մասնագիտական բարձր կարողություններ: Ուսուցիչը պետք է գիտակցի որ իր խնդիրը միաժամանակ՝ աշակերտների մոտ խոր հայրենասիրության սերմանումն է, անցյալի փորձից պատմական դասեր քաղելու գիտակցումը:

Հայոց պատմության դասին ազատագրական պայքարն ընդգրկող թեմաները պետք է ներկայացնել այնպես, որ սովորողները համակվեն բուռն հայրենասիրության, ազգապաշտության խորը զգացումներով, միաժամանակ կարողանան ամբողջական ընկալել պատմական իրադարձությունների պատկերը, տիրապետեն փաստերին, կարողանան քննության ենթարկել դրանք, հստակ ընկալեն դեպքերի ժամանակագրական սահմանները, վեր հանեն տվյալ ժամանակաշրջանի ազատագրական շարժման առանձնահատկությունները, կարողանան իրար համադրել դրանք և համեմատականներ անցկացնել տարբեր ժամանակաշրջաններում ազատագրական շարժումների միջև, վեր հանեն պայքարը պայմանավորող ներքին և արտաքին գործոնները, պատճառահետևանքային կապերը, պայքարի արդյունքները, դատել ձեռքբերումների ու կորուստների մասին, կատարել համապատասխան եզրահանգումներ: Դասի ընթացքում ուսուցիչն օգտագործում է այն բոլոր հնարավոր միջոցներն ու մեթոդները, որոնք բարենպաստ պայմաններ են ստեղծում, որպեսզի բոլոր սովորողներն անմիջապես ուսուցման պրոցեսում յուրացնեն ուսումնասիրվող առարկայի հիմնական դրույթները[2]»:

Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի «Հայոց պատմության» թեմատիկ ծրագրով ընդգրկված են հայ ազգային- ազատագրական շարժումները 16-19-րդդ. առանձին 3 գլուխներով: Սույն հոդվածում փորձել ենք անդրադառնալ 16-19-րդդ. ազգային-ազատագրական շարժումների պատմության լուսաբանման մի քանի հարցերի և ուսուցչի կողմից դրանք ներկայացնելու

[1] *Պատմություն, հասարակագիտություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Եր., 2007, էջ 6:*
[2] *Տես՝ Педагогика, под ред. П.И.Пидкасистого, М.,1998,стр.304:*

մեթոդներին: Նպատակահարմար է յուրաքանչյուր գլխի վերջում անցկացնել ամփոփիչ դասեր, որոնք կոչված են ամրապնդելու աշակերտների ստացած գիտելիքները, դրանք համակարգելու, ամբողջական պատկերացնելու, ինչպես նաև ձևավորելու հիշյալ շրջանի ազատագրական շարժումների զարգացման փուլերի, քաղաքական կոմնորոշումների, պայքարի կազմակերպիչ ուժերի, մեթոդների, հայկական հարցի քննարկումների, ազատագրական պայքարի և գաղափարախոսության ընդհանուր հայեցակարգ:

Պետք է գիտակցել, որ նմանատիպ թեմաները լավագույնս կարող են իրագործել պատմության դասին ներկայացվող պահանջները, սովորողներին դաստիարակել ազգային ինքնագիտակցության ոգով, վերջիններիս մոտ ձևավորել և զարգացնել վերլուծական միտքը: Ուսուցիչը պետք է կարողանա աշակերտի մոտ ձևավորել լրջություն և հարգանք փաստերի նկատմամբ, կարողանա խմբավորել տարաբնույթ և նույնանման փաստերը, ցույց տալ նրանց միջև բազմակողմ կապերը՝ պատճառ, հետևանք, արդյունք, համադրություն, հակադրություն: Այդպիսի կարողությունների ձեռքբերումը հիմք կդնի աշակերտների պետական մտածողության ձևավորմանը[1]:

Փորձենք անդրադառնալ հայ ժողովրդի պատմության բարդ, հերոսական և առանձնահատուկ շրջաններից մեկի՝ 16-19-րդ դդ. ազգային ազատագրական շարժումներն ընդգրկող թեմաների դասավանդմանը: Հարկ է գիտակցել, որ խնդիրը հետևյալն է. սովորողները պետք է կարողանան հստակ տարբերակել այս դարաշրջաններում պայքարի առանձնահատկությունները, քննել դրանք, հստակ տեսնել 16-19-րդ դդ. ազատագրական պայքարի վայրիվերումները, հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումները,տարբեր շրջաններում դրանց փոփոխումները, պատճառները, հայկական հարցի քննարկումները, սեփական ուժերին ապավինելու պատրաստակամությունը: Սովորողների մոտ պետք է ձևավորել այն մտածողությունը, որ պետականությունը նախ և առաջ ստեղծվում ու հիմնավորվում է ներսից, անկախությունը ձեռք է բերվում, եթե ազգը ապավինում է իր սեփական ուժերին և ձգտումներին: Պետք է ստեղծել զգացմունքային-ստեղծագործական մթնոլորտ, աշակերտները պետք է հասկանան, որ մեծագույն սիրով պետք է կառչած լինեն հողին և հայրենիքին, հեռու լինեն օտարամետությունից:

Ցանկալի է, որ ուսուցիչը չբավարարվի միայն ուսումնական նյութով, կարելի է հանձնարարել մի քանի մասնագիտական գրականություն, այդ գրականությունից ընթերցել ժամանակաշրջանն առավել բնորոշող դրվագներ, ընդգծել, առանձնացնել դրանք :

Սովորողները պետք է նաև ընկալեն վերոհիշյալ ժամանակաշրջանում ազատագրական պայքարի, հայ ազատագրական մտքի զարգացումները, կարողանան բացահայտել տվյալ շրջանում հայ ազատագրական մտքի կողմնորոշումները, դրանք պայմանավորող գործոնները, վեր հանեն և խմբային քննարկման ենթարկեն բացթողումների պատճառները:

Անդրադառնալով 16-րդ դ. հայ ազգային-ազատագրական շարժմանը՝ ուսուցիչը ներկայացնում է շարժման նախաքայլերը: Նախ, անհրաժեշտ է ներկայացնել 15-16-րդ դդ. Հայաստանում ստեղծված խառնակ ու բարդ իրադրությունը (թուրքմենական, թաթարական տիրապետություններ, թուրք-պարսկական պատերազմները) անընդհատ կրկնվող արշավանքներն ու պատերազմները, երկրի ամայացումն ու բնակչության գերեվարումները,որոնք ստիպել են հայ քաղաքական ու հոգևոր գործիչներին ելք փնտրել ստեղծված իրավիճակից դուրս գալու: Այնուհետև անհրաժեշտ է ներկայացնել հայ գործիչների գործնական քայլերը, մասնավորապես 1547թ. հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցու և 1562թ. Միքայել Սեբաստացու կողմից հրավիրված գաղտնի խորհրդաժողովները և պատվիրակությունների մեկնումը Եվրոպա՝ հայոց պետականության վերականգնման նպատակով: Պետք է ընդգծել նաև այն, որ շարժման ծավալման ներքին գործոնը հայրենիքի անմխիթար վիճակն էր և պետականության վերականգնման գաղափարը, որը երբևիցե չէր լքել հայությանը: Ահա այս պայմաններում էլ ստեղծվում են հայ ազատագրական շարժման անդրանիկ ձգտումները:

Հարկ է աշակերտների ուշադրությունը հրավիրել քննարկվող շրջանի ազատագրական շարժման առանձնահատկությունների վրա:

Ազատագրական շարժման նախաքայլերը կատարում էր հայոց եկեղեցին: Սա բնորոշ է հիշյալ շրջանի ազատագրական շարժմանը:

---

[1] *Սարգսյան Ա., Պատմության դասին ներկայացվող արդի պահանջները, «Մանկավարժական միտք», № 4, Եր., 2008, էջ 175:*

Միաժամանակ հայոց հոգևոր միջավայրը ստեղծված կացությունը բացատրում էր հայերի գործած և չգործած բազում մեղքերով: Իսկ «մեղավոր» ժողովուրդ լինելու բարդույթը իր հերթին ծնում էր սեփական ուժերի նկատմամբ անվստահության բարդույթ[1]:

Պետականության բացակայությունը, հայոց զինական ուժի ցրվածությունը, համախմբող ու ղեկավարող ուժի բացակայության պայմաններում հայ ազատագրական շարժումը հանդիպում է լուրջ խոչընդոտների: Կար ազատագրվելու գաղափարը, սակայն կենսագործելու միջոցներն ու խնդիրները մնում էին առկախ: Այստեղ էլ սկիզբ են առնում հայ ազատագրական լեգենդի նոր դրսևորումները:

Ըստ որի համաձայն Ներսես Մեծի տեսիլների, Հայաստանը կարող էր ազատագրվել միայն արտաքին որևէ քրիստոնյա պետության օժանդակության:Ընդ որում կախված տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններից, հայոց ազատագրական առաքելությունը վերապահվում էր մերթ Հռոմի պապին ու Վենետիկի դոժին, մերթ Բուրբոններին ու Հաբսբուրգներին, գերմանական տարբեր իշխանների և ի վերջո Ռուսաց ցարին:

Հայ ազատագրական շարժման գլխավոր առանձնահատկություններից մեկն էլ կողմնորոշման հիմնահարցի անընդհատ խմբագրումներն էին, նոր հասցեատիրոջ երկարատև որոնումները:

Հայ ազատագրական շարժման կարևորագույն առանձնահատկությունը հենց սկզբից էլ կայանում էր նրա երկփեղկվածության մեջ: Հայաստանը գտնվում էր երկու և երբեմն ավելի քաղաքական տիրապետությունների ներքո: Հայ ազատագրական միտքը հաճախ չկարողացավ և ի վիճակի չէր մշակելու միասնական ազգային-ազատագրական գաղափարախոսություն: Արևմտահայ և արևելահայ ազատագրական շարժումները փոխկապակցված չէին:

Մյուս առանձնահատկությունը դավանափոխության խնդիրն է:Կաթոլիկ արևմուտքը օգտագործելով հայերի աղերսագիր- դիմումնագրերը՝ անմիջապես առաջ էր քաշում նրանց դավանափոխ լինելու նախապայմանը: Հանուն գերխնդրի հայկական կողմը հանդես էր գալիս դավանական զիջումներ կատարելու պատրաստակամությամբ:

Ի տարբերություն XVI դարի, հայ ազատագրական շարժումը XVII դ.որդեգրում է նոր կողմնորոշում:Ազատագրական շարժման գործիչներն իրենց հույսը սկսում են կապել Ֆրանսիայի հետ: Այս շրջանի հայ ազատագրական դեգերումներին խթանեց Կանդիայի (Կրետեի պատերազմը 1645-1669 թթ.): Փոփոխության է ենթարկվում նաև հայ ազատագրական շարժման սոցիալական միջավայրը:Ճիշտ է եկեղեցին շարունակում էր կարևոր դեր խաղալ հայ ազատագրական գաղափարախոսության մշակման գործում, սակայն շարժման նախաձեռնող ուժը դառնում է հայ առևտրական դասը, որը կարևոր դեր է խաղում հասարակական կյանքում:Ուսուցիչը ներկայացնում է Սսի հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատացու 1663թ. փետրվարի 12-ի դիմումնագիրը Ֆրանսիայի թագավորին, այնուհետև հայ առևտրական դասի ներկայացուցիչ Մեսրոպ Բաղիշեցու 1666թ. այցը ֆրանսիա:

17-րդ դ. վերջին և 18-րդ դ. սկզբին ազատագրական պայքարը կապված է Իսրայել Օրու անվան հետ: Այս շրջանի ազատագրական շարժման գլխավոր առանձնահատկությունը նախորդ դարաշրջանների աղերսագիր-դիմումնագրերի փոխարեն Հայաստանի ազատագրության հստակ և իրատեսական ծրագրերի կազմումն է, (Պֆալցյան, Մոսկովյան ծրագիր) միաժամանակ տեղի է ունենում հայ քաղաքական կոմնորոշման կտրուկ շրջադարձ: Օրու պֆալցյան ծրագիրը դատապարտված էր անհաջողության, քանզի 1699թ. Ավստրիայի և Թուրքիայի միջև կնքված Կառլովիցի հաշտության պայմանագրով Թուրքիայի և Արևմտաեվրոպական երկրների միջև հաստատվել էր տևական խաղաղություն: Ինչպես նկատում է Աշոտ Հովհաննիսյանը «Ընդհանուր քաղաքական այս նոր իրադրությունից հայ մելիքներից լիազորված դիվանագետը Հայաստանի ազատագրման հեռանկարների համար պիտի աներ նոր հետևություններ[2]»:

Նոր հետևությունները կապված էին դեպի Ռուսաստան քաղաքական կողմնորոշման մեջ:

18-րդ դ. հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության հերոսական էջերից են Սյունիքի և Արցախի ազատագրական շարժումները: Փառաբանելով հայ ազատագրական պայքարի գործիչներին, ձեռք բերված հաղթանակները, միաժամանակ պետք է շեշտել, որ չհրաժարվելով արտաքին ուժերի օժանդակության հետ կապված հույսերից, 18-րդ դ. հայ ազատագրական պայքարը թևակոխում է որակական նոր փուլ՝ կապված այն բանի հետ, որ ժողովուրդը կրավորական

---

[1] *Հայոց պատմություն. հիմնահարցեր, խմբագրությամբ Հ.Սիմոնյանի, Երևան, 2000, էջ 74:*

[2] *Հովհաննիսյան Ս,, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան 1959, էջ 414:*

պասիվ դիրքորոշումից անցում է կատարում զինյալ պայքարի փուլ: Այստեղ նկատենք, որ դասավանդման տեսակետից կարևոր է, որ աշակերտները կարողանան վեր հանել Արցախի ու Սյունիքի ազատամարտերի նմանություններն ու տարբերությունները ու համեմատեն դրանք:

18-րդ դարի 2-րդ կեսին հայ ազատագրական շարժումն ավելի շատ կապված էր գաղութահայության հետ և կրում էր գաղափարաքարոզչական բնույթ: Կազմվում էին Հայաստանի ազատագրության ծրագրեր /Մ. Սարաֆյան, Հ. Արղության, Շ. Շահամիրյան/, որոնք այնքան էլ իրատեսական չէին:

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ ժողովրդին չտվեց իր բաղձալի անկախությունը:19-րդ դ. Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին հայ ժողովուրդը ակտիվորեն օժանդակեց ռուսական զենքի հաղթանակին: Սակայն հայկական հարցի միջազգայնացումը և Սան- Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներից դասեր քաղած հայ հասարակական-քաղաքական միտքը վերջապես հանգեց Խրիմյանի «Երկաթե շերեփի» գաղափարին, այսինքն զենքի ուժով ազատագրվելու գաղափարին:

Ստեղծվեցին հայ քաղաքական կուսակցություններ և սկիզբ դրվեց հայդուկային պայքարին: Հայությունը որդեգրել էր սեփական ուժերին ապավինելու կողմնորոշումը, որի շնորհիվ ժողովրդի մի զգալի հատված փրկվեց ուծացումից ու ոչնչացումից: Փաստորեն, հայ ազատագրական մտքի պատմության մեջ, 19-րդ դարի վերջին քառորդը արմատական շրջադարձի ժամանակաշրջան հանդիսացավ: Հայոց դարավոր ազատագրական շարժումը բարձրացավ նոր աստիճանի՝ ազգային հեղափոխության: Հայկական հարցի լուծման, հայկական պետականության վերականգնման հույսերը գլխավորապես կապվեցին հայ ժողովրդի զինված պայքարի հետ: Աշակերտներին ներկայացնելով և բացահայտելով հայոց ազատագրական մտքի զարգացման ուղին 16-19-րդ դարերում, ուսուցիչը հմտորեն կարող է կիրառել համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ: Մենք առաջարկում ենք քննարկվող թեման անցկացնել գիտական բանավեճի մեթոդի միջոցով: Կարելի է նաև աղյուսակի տեսքով ներկայացնել 16-19-րդ դարաշրջանները, այնուհետև նշել յուրաքանչյուր դարաշրջանում ազատագրմամ շարժման կազմակերպիչ ուժը, քաղաքական կողմնորոշումը, իսկ աշակերտներից պահանջել ներկայացնել ընթացքը, վեր հանել շարժման թերի և խոչընդոտող հանգամանքները, փորձել իրար համադրել տարբեր դարաշրջանների ազատագրական շարժումներն ու դրանց առանձահատկությունները:

Ցույց տալով քննարկվող թեմայի պատմական զարգացումները՝ ուսուցիչը պետք է աշակերտների միտքն ուղղորդի այն փաստի վրա, որ 16-19-րդ դարերում հայ ազատագրական պայքարի հիմնական դասերն են՝ սեփական ուժերին ապավինելն ու զինյալ պայքարը: Այդ ամենը պետք է յուրացի և հաշվի առնվի հետագայում:

Այսպիսով, կրթության, դաստիարակության որակի բարձրացումը մեծապես կախված է ուսուցչի մասնագիտական վարպետությունից: Պատմաբան ուսուցիչը՝ նախանցյալ ժամանակների ազատագրական պայքարի դրվագների վրա, պետք է կարողանա աշակերտներին դաստիարակել ազգային արժանապատվության, բուռն հայրենասիրության զգացումներով, անկախության ու պետականության շահերից բխող հստակ մտածողությամբ:

Գրականություն

1. Հայոց պատմություն. հիմնահարցեր, խմբագրությամբ Հ.Սիմոնյանի, Երևան, 2000:
2. Հովհաննիսյան Ս,, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Երևան 1959:
3. Պատմություն, հասարակագիտություն, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Եր., 2007:
4. Սարգսյան Ա., Պատմության դասին ներկայացվող արդի պահանջները, Մանկավարժական միտք, № 4, Եր., 2008:
5. Педагогика, под ред. П.И.Пидкасистого, М.,1998.

Преподавание темы “Армянские освободительные движения в 16-19 вв.” в школе

А.Б.Арстамян

Резюме

В данной статье обсуждаются методы и особенности преподавания темы “Армянские освободительные движения в 16-19 вв.”. В статье выражается мысль о том, что данные темы могут способствовать национальному самосознанию учеников.

The teaching of topics in the Armenian liberation movements in 16-19th centuries at schools

A.B.Arstamyan

Summary

This article discusses the teaching methods and characteristics of Armenian liberation movements in 16-19th centuries, at school. Here the idea that these topics can be best contribute to the education of students in Armenian spirit is discussed.

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 347(479.243) *Քաղաքացիական իրավունք*

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՐԳԵԼՈՒՄԸ ԷՂՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Ն.Հ.Սարգսյան

Նվիրատվությունը որպես քաղաքացիական իրավունքի հնագույն ինստիտուտներից մեկը՝ հիմք է մեկ անձի կողմից գույքի նկատմամբ իրավունքը մյուսի սեփականությանը հանձնելու համար:

ԷՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ քաղ. օր/ 594-րդ հոդվածը նվիրատվության պայմանագիր է ճանաչում այն պայմանագիրը, որով մի կողմը /նվիրատուն/ մյուս կողմի /նվիրառուի/ սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կամ իրեն /երրորդ անձին/ ուղղված գույքային իրավունք /պահանջ/, ազատում կամ պարտավորվում է ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից:

Համաձայն նշվածի՝ նվիրատվությունը կարող է հանդես գալ և՛ ռեալ պայմանագրի, և՛ կոնսենսուալ պայմանագրի ձևով: Այսինքն, եթե պայմանագրով նվիրատուն մյուս կողմին՝ նվիրառուին, անհատույց գույք է հանձնում, ապա նվիրատվության պայմանագիրը ռեալ է, իսկ եթե նվիրատուն պարտավորվում է հետագայում հանձնել գույք կամ գույքային իրավունքներ, ապա պայմանագիրը կոնսենսուալ է:

Նվիրատվության պայմանագիրը պայմանագրային պարտավորություններում առանձնանում է մի շարք բնորոշ հատկանիշներով: Դրանք են՝ պայմանագրի անհատուցելիությունը, նվիրառուի գույքի ավելացումը, նվիրառուի գույքի ավելացումը՝ նվիրատուի գույքի ծավալի նվազեցմամբ, նվիրատուի՝ նվիրառուին գույքի հանձնման կամ պարտավորությունից ազատելու մտադրության առկայությունը և նվիրառուի՝ նվերը ընդունելու համաձայնությունը: Հիշյալ հատկանիշներն իրենց համակցությամբ կարևոր են նվիրատվության պայմանագրի համար և դրանցից որևէ մեկի բացակայությունը կհանգեցնի նվիրատվության պայմանագրի անվավերության:

Քաղ. օր-ի 598-րդ և 599-րդ հոդվածներով նախատեսված են նվիրատվությունը սահմանափակելու և արգելելու մասին նորմերը: Այսպես, իրավաբանական անձն իր տիրապետման ներքո գտնվող գույքը կամ դրա կառավարման իրավունքը սեփականտիրոջ համաձայնությամբ կարող է նվիրել, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Բայց եթե գույքը գտնվում է ընդհանուր համատեղ սեփականության ներքո, ապա անհրաժեշտ է սեփականության բոլոր մասնակիցների համաձայնությունը: Այս շեշտումով քաղ. օր-ի 599-րդ հոդվածը միաժամանակ մատնանշում է 198-րդ հոդվածով */Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը, օգտագործելը և տնօրինելը/,* նախատեսված կանոնների պահպանման